

ԵրՊԼՀ Ուսանողական խորհրդի նախագահության համար 07 նիստում ձևավորվել է հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ափյան Հասմիկ Խաչատուրի, Գրիգորյան Անահիտ Վազգենի, Ավետիսյան Կարինա Յուրիի, Ստեփանյան Գալուստ Ռուբենի, Սանոսյան Աստղիկ Էլիոտի, որը զբաղվելու էր ուսանողների դիմումների ընդունման, քննարկման և գումարների բաշխման աշխատանքներով: Դիմումները ընդունվել են մինչև 16.03.2010: Դիմումները քննարկվել են նաև «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի ներկայացուցիչների հետ և կազմվել է հետևյալ արձանագրությունը.

Արձանագրություն

29.03.2010

Մենք՝ ներքո ստորագրողներս՝ հանձնաժողովի կազմով՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան Պետական Լեզվանական Համալսարանի Ուսանողական խորհրդի նախագահ Հասմիկ Ափյանը, ԼՄՀՖ ՈՒԽ նախագահ Անահիտ Գրիգորյանը, ՌՕԼՖ ՈՒԽ նախագահ Կարինա Ավետիսյանը, ԼՄՀՖ ՈՒԽ փոխնախագահ՝ Աստղիկ Սանոսյանը և ՕԼՖ ուսանող Գալուստ Ստեփանյանը կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի կողմից համալսարանի դասախոս Դավիթ Ֆահրադյանի՝ գինեսի Ռեկորդ սահմանելու կապակցությամբ ուսանողներին նվիրաբերված 10 մլն. դրամը նպատակահարմար ենք գտնում համալսարանի ուսանողներին՝ որպես օգնություն բաշխելու հետևյալ կերպ՝

1. Միակողմանի ծնողագուրկ և ծանր սոցիալական պայմաններ ունեցող ուսանողներին՝ 90 000 դրամ, որոնց թիվը կազմում է 8 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 720 000 դրամ:
2. Միակողմանի ծնողագուրկ և սոցիալապես անապահով ուսանողներին՝ 80 000 դրամ, որոնց թիվը կազմում է 9 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 720 000 դրամ:
3. Միակողմանի ծնողագուրկ / միայնակ մայրեր ունեցող/ ուսանողներին՝ 70 000 դրամ, որոնց թիվը կազմում է 40 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 2 800 000 դրամ:
4. 1-ին խմբի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին՝ 80 000, որոնց թիվը կազմում է 4 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 320 000 դրամ:
5. 2-րդ խմբի հաշմանդամ ծնողներ ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին՝ 70 000 դրամ, որոնց թիվը կազմում է 7 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 490 000 դրամ:
6. 2-րդ խմբի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին՝ 50 000 դրամ, որոնց թիվը կազմում է 16 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 800 000 դրամ:
7. 3 - րդ խմբի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին՝ 25 000 դրամ, որոնց թիվը կազմում է 4 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 100 000 դրամ:
8. 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 60 000 դրամ, որոնց թիվը կազմում է 7 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 420 000 դրամ:
9. Վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող- երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 40 000 դրամ, որոնց թիվը կազմում է 35 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 1 400 000 դրամ:
10. Ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների ուսանողներ՝ 50 000 դրամ: Նրանց թիվը կազմում է 18 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 900 000 դրամ:

11. Ծանր պայմաններում ապրող ուսանողներին՝ 25 000 դրամ, որոնց թիվը կազմում է 16 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 400 000 դրամ:

12. Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ որպես կրթաթոշակ՝ 30 000 դրամ, որոնց թիվը կազմում է 26 ուսանող, և ըստ այդմ ընդհանուր գումարը կազմում է 780 000 դրամ:

Ուսանողների ցուցակը կցվում է արձանագրությանը:

Միաժամանակ հանձնաժողովը նպատակահարմար է գտել հանձնաժողովի կազմի մեջ մտնող ուսանողներին՝ Հասմիկ Ափյանին, Անահիտ Գրիգորյանին, Կարինա Ավետիսյանին, Աստղիկ Սանոսյանին, Գալուստ Ստեփանյանին, պարզևատրելու 30 000 դրամով իրենց կատարած աշխատանքների համար / ընդամենը 150 000 դրամ/:

Հասմիկ Ափյան Խաչատուրի

Անահիտ Գրիգորյան Վազգենի

Կարինա Ավետիսյան Յուրիի

Գալուստ Ստեփանյան Ռուբենի

Աստղիկ Սանոսյան Էլիոտի

Սույն արձանագրությունը համաձայնեցված է «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի ներկայացուցիչների հետ: